# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 23-Ա

<<27>> փետրվարի 2025 թվական քաղաք Մարալիկ

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՄԲԱՏ ՈՒԼԻԽԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,48908 ՀԵԿՏԱՐ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՋՐՈՎԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ, ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ,ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետի, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Նոտարական վարերացում ստացած <<Գրանիտ>> կոոպերատիվի 1997 թվականի հունիսի 4-ի առուծախի պայմանագիրը, Անիի շրջխորհրդի գործկոմի 1990 թվականի դեկտեմբերի 11-ի Նո 12 արձանագրության քաղվածը, 13.09.2022 թականին վավերացված <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության կողմից, համաձայն որի <<Գրանիտ>> կոոպերատիվին գյուղատնտեսական մթերքների արտադրության համար հատկացվել է 0.5 հեկտար հողամաս, հաշվի առնելով քաղաքացի Սմբատ Ուլիխանի Հակոբյանի լիազորված անձ՝ Գրիգոր Վոլոդյայի Եղոյանի /Լիազորագիր՝ տրված 2024 թվականի սեպտեմբերի 4-ին, Նոտարական ակտի կոդ՝ 849-20240910-67-8321895, Գաղտնագիր՝ VYRA8U/ 2025 թվականի փետրվարի 19-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Նոտարական վարերացում ստացած <<Գրանիտ>> կոոպերատիվի 1997 թվականի հունիսի 4-ի առուծախի պայմանագրի համաձայն, քաղաքացի Սմբատ Ուլիխանի Հակոբյանին վաճառված Կիսակառույց շինության, որը համաձայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից /Որակավորման վկայական՝ N 0206, տրված՝ 29/05/2012թ/ տրամադրված 18/11/2024 թ. եզրակացության քանդված է, պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն

հանդիսացող 08-003-0126- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,48908 հեկտար մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով՝ 695717 (վեց հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Սմբատ Ռուլիխանի Հակոբյանին /Անձնագիր՝ AV0403060, տրված՝ 31.08.2022թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսկի փողոց շենք 6, բնակարան 20/, լիազորված անձ՝ Գրիգոր Վոլոդյայի Եղոյանի /Լիազորագիր՝ տրված 2024 թվականի սեպտեմբերի 4-ին, Նոտարական ակտի կոդ՝ 849-20240910-67-8321895, Գաղտնագիր՝ VYRA8U, Նույնականացման քարտ՝ 3010560028, տրված՝ 16.12.2019թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսկի փողոց շենք 12, բնակարան 12/ :

2. Հողամասի մակերեսը որոշվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի փաստացի հատակագծի համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Սմբատ Ռուլիխանի Հակոբյանի /այսուհետև՝ Քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում Քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ՝ 12 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Հ. ՁԱՏԻԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ -------------- -------------- --------------

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ -------------- -------------- --------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ